



Պտղի բջիջների շառավիղը (fetal cell line) տարբերվում է պտղի բջիջներից և պտղի հյուսվածքից: Պտղի բջիջները և պտղի հյուսվածքը վերցվում են անմիջապես պտղից: Պտղի բջիջների շառավիղները ստեղծվում են լաբարատորիայում այն բջիջներից, որոնք վերցվել են պտղից: **Միացյալ Նահանգներում օգտագործման համար հասանելի COVID-19-ի դեմ պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում պտղի բջիջ կամ պտղի հյուսվածք:**

Պտղի բջիջների շառավիղներն օգտագործվում են՝ ստեղծելու և/կամ արտադրելու համար պատվաստանյութերի որոշ տեսակներ հետևյալ պատճառներով.

1. Վիրուսը զարգանալու համար բջիջների կարիք ունի: Սովորաբար այն վիրուսները, որոնք վարակում են մարդկանց, ավելի լավ են զարգանում մարդկանցից վերցված բջիջներում, քան կենդանիներից վերցված բջիջներում:
2. Պտղի բջիջների շառավիղները կարելի օգտագործել ավելի երկար, քան բջիջի այլ տեսակները:
3. Պտղի բջիջների շառավիղները կարելի է պահպանել ցածր ջերմաստիճանի պայմաններում, որը գիտնականներին հնարավորություն է տալիս օգտագործել պտղի բջիջների շառավիղ, որը ստեղծվել է տասնամյակներ առաջ:

Պտղի բջիջների շառավիղներն օգտագործվել են Միացյալ Նահանգներում օգտագործվող COVID-19-ի դեմ պատվաստանյութերի ստեղծման տարբեր փուլերում, դրանց փորձարկումների և/կամ արտադրության համար:

- **COVID-19 դեմ Pfizer and Moderna պատվաստանյութեր:** Պտղի բջիջների շառավիղն օգտագործվել է լաբարատորիայում փորձարկման ժամանակ՝ նախքան պատվաստանյութերը մարկանց վրա փորձարկելը:
- **COVID-19 դեմ Johnson & Johnson պատվաստանյութ:** Պտղի բջիջների շառավիղն օգտագործվել է պատվաստանյութը ստեղծելու, արտադրելու և փորձարկելու համար:
- **COVID-19 դեմ Novavax պատվաստանյութ:** Պտղի բջիջների շառավիղներ չեն օգտագործվել պատվաստանյութը ստեղծելու, արտադրելու և փորձարկելու համար:

Պտղի բջիջների շառավիղները, որոնք օգտագործվել են COVID-19-ի պատվաստանյութերում, ստեղծվել են 1973 և 1985 թվականներին 2 արհեստականորեն ընդհատված պտուղների բջիջներից: Երկու արհեստական ընդհատումները չեն արվել հատուկ պատվաստանյութերի համար: Այս նպատակով չեն օգտագործվել հետազայում արված ոչ մի արհեստական ընդհատում կամ պտղի բջիջների այլ աղբյուրներ:





Լոս Անջելեսի Շրջան

# COVID-19-ի դեմ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՊՏԴԻ ԲՋԻՋՆԵՐԻ ՇԱՌԱՎԻՂՆԵՐԸ



[Կաթոլիկ Եկեղեցին](#) վերանայել է COVID-19-ի դեմ պատվաստանյութերի արտադրության նպատակով պտղի բջիջների շառավիղների օգտագործման հարցը և հայտարարել է, որ «բարոյապես ընդունելի է պատվաստվել COVID-19-ի դեմ այն պատվաստանյութերով, որոնք օգտագործել են արհեստականորեն ընդհատված պտուղների բջիջների շառավիղներ իրենց հետազոտությունների և արտադրության գործընթացում»:

[Շարլոթ Լոմեր հնաստուստը](#), որն արհեստական ընդհատումները չընդունող (pro-life) կազմակերպություն է, համարում է, որ Pfizer, Moderna և Novavax պատվաստանյութերը Էթիկապես անվիճելի են:

Եթե այս հարցը մտահոգում է ձեզ, խրախուսում ենք, որ այս մասին խոսեք ձեր հոգևոր առաջնորդի հետ կամ որևէ մեկի հետ, որը փորձառու է կենսաբանության հետ կապված Էթիկայի հարցերում: Նրանք կարող են ձեզ օգնել պատվաստման վերաբերյալ կայացնել հիմնավորված որոշում:

